


ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարեկանը 6 րուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայ ուսուցիչները. Նամակ խմբագրին: Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիական պարլամենտի նիստեր. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Տաճկաստանի հայ-կաթոլիկաց կաթողիկոսական-պատրիարքական աթոռը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

Ուսուցիչն է ուսումնարանի հոգին. ուսուցիչն է կրթութեան ղեկավարը,—ասա այն ճշմարտութիւնը, որ իբրև գեղեցիկ խօսք եր ամենայն օր հնչում է մեր դպրոցական կեանքի ասպարիզում:—Չունենալ արժանաւոր ուսուցիչներ, չունենալ վարժապետանոցներ,—ասա այն աղբիւր խօսքերը, որոնք իբրև դառն ճշմարտութիւններ լսվում են շատ կողմերից: Հայոց ուսումնարանները բացվում են: Մեր դպրոցական կեանքը նոր շրջանի մէջ է մտել: Նոր կանոնադրութիւնը նոր պահանջներ է մտցնում այդ կեանքի մէջ: Յաջորդներ, գործակալներ և քահանաների ազդեցութեան ներքոյ հոգաբարձական ընտրութիւններ են կատարվում: Գիւղական քահանան, գիւղական երեցիկը և հասարակութեան մի օր և է անգամը կազմում են գիւղական ուսումնարանի հոգաբարձութիւնը. իսկ քաղաքներում գործակալների ղեկավարութեամբ ընտրված մի քանի անձինք, հոգաբարձութիւն կազմելով, հրաւիրվում են կառավարելու դպրոցները,—մատաղ սերունդը կրթութեան տաճարները: Այդ հոգաբարձութեան ձեռքն է արվում ամբողջապէս ուսումնարանի տնտեսա-

կան մասը ուսումնական մասի զլխաւոր հսկողութիւնը և վաւերացումը...: Թեմական տեսուչների չը լինելու պատճառով, հոգաբարձութիւնները արդէն սկսել են իրանց գործունէութիւնը: Ասա սեպտեմբերը հասել է, և մի կողմ թողած շատ բան, թէ նոր պայմանները, թէ նոր պահանջները, թէ նոր կարգադրութիւնները, ուսուցիչներ, ուսուցչուհիներ, վարժուհիներ են հրաւիրվում, ուսուցական խմբեր են կազմվում: Տարի ու կէս պարապ մնացած վարժապետները և վարժուհիները, բարոյական նպատակ անգամ չը գտնելով հայոց ուսումնարանների վարչութիւններէն և նոյն իսկ հայ ժողովրդից,—այսօր աննկարգրելի ինքնամոռացութեամբ պաշտօն են փնտռում, տեղ են ուղում հայոց ուսումնարաններում: Առաջնորդարանների նախասենեակները լի են պաշտօն և բացատրութիւն խնդրող վարժուհիներով և վարժապետներով. գործակալներ, յաջորդներ և հոգաբարձութիւնների հասցէին տեղում են խնդիրներ և նամակներ:

Եւ ասա մինչ մի կողմից խնդրում են, աղերսում են, պատրաստակալութիւն են յայտնում իրանց ջանքերը և ոյժերը նուիրել դպրոցին և մանուկ սերունդի ուսման գործին,—միւս կողմից սառնասիրտ անտարբերութեան հետ երևան է գալիս աննկարգրելի մի վարժուհի:—Ինչպէս երևում է ամեն կողմից եկած տեղեկութիւններից, հայոց վարժապետներին և վարժուհիներին բացի բարոյական մեծ զրկանքներից ներկայ պայմաններում և հանգամանքներում, սպասում է և դրամական մեծ և ուղում է...

Մինչ մի կողմից խօսվում է ուսուցիչների ապահովութեան մասին, միւս կողմից դպրոցական վարչութիւնները ամենաողորմելի ուժիկներ են առաջարկում այն մարդոց, որոնց հրաւիրում են ղեկավարելու հասարակական ամենակարեւոր

հիմնարկութիւնը,—ուսումնարանը: Մինչ մի կողմից յոյս էին տածում որ գէթ իրանց հայոց հասարակութիւնները՝ դէպի ուսուցչական ասպարէզը օգտակալ և արժանաւոր ոյժեր հրաւիրելու համար՝ ներկայ պահանջների ժամանակ դոնեա՝ զբաղման օրինաւոր վարձատրութեամբ կը գործակալ վարժապետներին և վարժուհիներին, միւս կողմից հայոց բացվող դպրոցների հոգաբարձութիւնները այնպիսի ուժիկներ են առաջարկում, որպիսի ուժիկներ համարեա երբեք չեն առաջարկվել: Նրկուսից մէկը, կամ հայոց հոգաբարձութեանը շատ ստոր կարծիք ունենալ վարժապետի անձնաւորութեան վրա, կամ թէ չէ՝ օգուտ են քաղում այն հանգամանքից, որ ուսուցչութիւն և վարժուհիութիւն անելու ցանկութիւն յայտնողների թիւը մեծ է, մանաւանդ որ երկար ժամանակ պարապ մնալով նիւթական տաղանդի մէջ է դրել նրանց: Այսպէս թէ ոչ ինչպէս բացատրել այն երևոյթը, որ մեր նոյն իսկ քաղաքների և նշանաւոր գիւղերի ուսումնարանների վարչութիւնները շատ ծիծաղելի բիւզժէտ են կազմել առաջիկայ ուսումնական տարվայ համար: Օրինակի համար, Ալեքսանդրօպոլսը որ մի ժամանակ իր վարժապետներին և վարժուհիներին ուղիքին հարկւրներ և հազարներ էր տալիս, այժմ չորս, հինգ, վեց հարկւր է առաջարկում: Նրանք, որ մի ժամանակ եօթ հարկւր, ինն հարկւր, հազար էր տալիս, այժմ և երկու հարկւր յիսուսից է սկսել: Հազարներ տուող Շուշին՝ այսօր եօթ հարկւր մի համարեա բացառական բան է համարում: Բազում դժուարանում է եօթ հարկւրից շատ աւելի տալ: Ուրի, ինն հարկւր տուող Մոզդուրը այսօր հինգ հարկւր շատ է համարում: Ախալցխան չորս հարկւր ուղիքում թուրքի տալով ուսուցչին մի մեծ բարձր անող է կարծում իրան: Եօթ կամ ինն հարկւր տուող Աղսուրը այսօր եր-

կու հարկւր և չորս հարկւր է տալիս իր դպրոցների վարժապետներին: Սղնախը դժուարանում է հինգ հարկւր անգամ տալ, թէ և ութ հարկւրներ էր տալիս մի ժամանակ: Թէպէտ իր վարժուհիներին ուժիկը հինգ հարկւրից երկու հարկւր է իջեցնում: Սուրամը երեք հարկւր թուրքիով ատտեստատով վարժուհի է պահանջում. Հին-Նախի-ջևանը հարկւր ուղիքում թուրքի է նշանակում վարժապետին. Իգդիրը երկու հարկւր թուրքիով տիրացուն է վարժում: Գոցանից յետ չեն մնում Կարսը, Նիսապոլսը, Նուսին, Նոր-Բայազէթը: Նոյնն են անում Զաքարիայան, Քուրթալի, Վաղարշապատը, Ղազարը, Ախալքալաքը, Զալալօղլին, Ղարաքիլիսան: Գեռ չենք խօսում այն գիւղերի մասին, որտեղ թշուառ գիւղացին անկարող է մեծ վարձատրութիւն տալ իր վարժապետին...

Միթէ յերաւի տարի և կէս փակված դպրոցների դրամական միջոցները պակասեցան, փոխանակ աւելանալու կամ միթէ հայ հասարակութիւնները կարծում են որ այդ տարի ու կէսվայ ընթացքում հայոց վարժապետները շարունակ ստացել են ուժիկներ...: Ընդունինք որ հայ վարժապետները և վարժուհիները մեծ մասամբ նախապատրաստված չեն, ընդունինք որ նրանք չունեն որոշ սկզբունքներ, ենթադրենք որ նրանք անընդունակ են նուիրվելու որ և է կրթական դադափարի. ապա ինչ հիման վրա հայոց դպրոցների վարչութիւնը և հոգաբարձութիւնները կարծում են օգտակալ կարող են լինել ժողովրդի կրթութեան գործին, և կարող են գրաւել դէպի գաւառական խորքերը այն վարժապետներին և վարժուհիներին, որոնք ճանապարհ ընկնելով դէպի իրանց պաշտօնատեղին, չը դիտեն արեւօք միջոց պէտք է ունենան ապրելու, և կամ մի քանի թուրքի կունենան արեւօք վերադառնալու այն ճանապարհով, որով որ գնում են...: Կարելի է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ-ԿԱԹՈՒԿԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՒԱՆ-ՊԱՏՐԱՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՆ

Մի քանի ժամանակից ի վեր, Կ. Պոլսոյ հայ-կաթոլիկ պատրիարքարանի մասին թէ թիւրքերոյ և թէ Ռուսաստանի հայ մամուլը մէջ բաւականի խօսվում է: Պատճառներն, ի հարկէ, պակաս չեն: Սղնախների Հայաստանում տարածուելը, Ռէվերսսուրուսի մերժման մասին յարուցված խնդիրը, Վահայ լուսաւորչական հայոց մի մասի կաթոլիկութեան դիմելու միտումը, գեր. Ագարեանի ստացած նախկին արտօնութիւններն պարունակող բէրաթին և այլն: Լաւ ըմբռնելու համար հայ-կաթոլիկ պատրիարքարանի ներկայ ընթացքի շարժառիթներն, հարկաւոր է փոքր ի շատէ հաստատուն տեղեկութիւն ունենալ Տաճկաստանի հայ-կաթոլիկաց կրօնական և հասարակական կազմակերպութեան, կաթողիկոսական-պատրիարքական աթոռի հաստատման հանգամանաց և առհասարակ հայ-կաթոլիկ հասարակութեան ի սկզբանէ՝ իր այլակրօն համազգայնոց հետ ունեցած յարաբերութեանց մասին: Խնդիրը նկատելով հիմնաւորապէս իբրև մի հարց, որ ուղղակի կապ ունի ազգային ժողովրդական ընդհանուր գրութեան հետ իր անցեալով, ներկայով և որ գլխաւորն է, մեծ ազդեցութիւն պիտի ունենայ իր ապագայով, մենք աւելորդ չենք համարում, ներկայ յօդուածով մի պատմական—քննադատական ընդհանուր տեղեկութիւն տալ «Մշակի» յարգոյ ընթերցողներին թէ ինչ հանգամանքների ազդեցութեամբ է սնած Տաճկաստանի կաթոլիկ հայոց կաթողիկոսական-պատրիարքական աթոռը և ինչ յարաբերութեան մէջ է գտնված նա դէպի իր ժողովուրդը և դէպի իր համազգայինները: Այս տեսութիւնը լրացնելու համար մենք ներկայացնում ենք նաև գեր. Ագարեանի նորերումս ա-

ռած բերաթը, որ պարունակում է քրիստոնեայ պատրիարքներին նախապէս չորսուած բոլոր արտօնութիւնները, և որը բառ առ բառ թարգմանել ենք տաճկական ընթերցից:

Մեր յօդուածում յիշուած պատմական դէպքերն հաւաքել ենք արժանահատ աղբիւրներից, իսկ ժամանակակից դէպքերին մենք անձամբ ականատեսն ենք եղել Կ. Պոլսում:

Ա.

Թիւրքիայի մայրաքաղաքում հայ-կաթոլիկների առաջին անգամ իբրև մի հասարակութիւն խմբաւորուելու մասին XVII դարի միջինները, այսինքն այն ժամանակ, երբ Կ. Պոլսոյ հայոց պատրիարքական աթոռը դանազան կողմնակցութեանց ձեռքին խաղաղ էր եղած և մի պատրիարքը դեռ ևս իր աթոռի վրա չը հաստատված, շատ անգամ հաստատութեան արձույթի բերաթին էլ չը ստացած, կամ պաշտօնազուրկ էր լինում, կամ հրաժարվում, երբեմն էլ քաղաքում էր, այնպէս որ 50 տարուան միջոցում (1650—1700) 36 պատրիարք միմեանց յաջորդեցին: Գիւրին է երբեք անկախ ազգային իշխանութեան ինչ անկարգ գրութեան հասնելը: Իրերի այդ վիճակը մեծ դիւրութիւն պատճառեց հայ-կաթոլիկաց թիւի բազմանալուն, գլխաւորաբար եղբւրս կրօնաւորների պրօպագանդայի շնորհիւ: Ինչքան որ հայ-կաթոլիկները ընդունել էին հռոմէական դաւանութիւնը, սակայն նոքա մինչև ներկայ դարի սկիզբները կերպովապէս մի առանձին հասարակութիւն էին կազմում: Նոքա ըստ առաջնոյն միացած էին հայոց պատրիարքական իշխանութեան ներքեւ, և եթէ երբեմն յաճախում էին լատինաց եկեղեցիներն, (վասն զի իրանք սեփական եկեղեցիք չունէին դեռ), այդ էլ մեծ գզուշութեամբ և խիստ ծածուկ: Առիթը պատահած ժամանակ նոքա ըստ ամենայնի վարվում էին այնպէս, ինչպէս մի ճշմարիտ լուսաւորչական: Այս տեղից մինչև XVIII դարի սկիզբը, որ ժամանակ Կ. Պոլսում պատրիարքական պաշտօն վարում էր Եփրեմ եպիսկոպոսն: Հայ կաթոլիկները անդադար գրգռած լա-

տին կղերից, հետզհետէ սկսան պաղլի լուսաւորչական եկեղեցիներից և դորա փոխաբէն յաճախել լատինաց եկեղեցիներն, թէպէտ դարձեալ մեծ գզուշութեամբ: Եփրեմ պատրիարքը, որ կարող է պարծիլ իբրև առաջին հայածին հայ-կաթոլիկաց, երբ նկատեց լատինականութեան շարժումն, փոխանակ վարուելու այնպէս, ինչպէս պէտք էր վարուել, դիցուեւ մոլորումս որդու հետ, նա, ընդհակառակն, գաւազանի հարուածներով, դառն կերպով, իբրև թշնամու հետ վարուելով ուղեց կաթոլիկութեան տարածման առաջնաւոր: Եփրեմ պատրիարքի սկսած գործը աւելի եռանդով առաջ տարաւ նրա յաջորդը, Յովնան: Նա պատրիարքը, որ մինչև անգամ քաջութիւն ունեցած մի հայ կաթոլիկ քահանային էլ օսման նեան կառավարութեան ձեռքով գլխատել տալ: (Տէր Կովտոս քահանայ—1707, նոյեմբերի 5, որի գերեզմանն այժմ ուխտատեղի է դարձել ոչ միայն կաթոլիկների, այլ և այլակրօնների համար և առանձին տոնախմբութեան օր ունի): Այս հալածանքներին կաթոլիկութիւնն ընդունող հայոց դէմ, աւելի կամ պակաս սաստկութեամբ շարունակվեցան մինչև 1800 թվ. սկիզբները, որ ժամանակ մի փորձ էլ եղաւ կրօնական խնդրոց մէջ համաձայնութեամբ երկու այլակրօն հասարակութիւնները միացնելու: Համաձայնութեան հետեանքն համաբաւար է չէր: Միւրոյ՝ տեսրակն եղաւ և ոչ այլ ինչ: Լուսաւորչական ստորին դասակարգի մէջ ծագած հակառակութեան և խառնակութեան ողին մի կողմից, և լատին կղերի դրեւելով Հռոմ: մայ կաթոլից միացնել կաթոլիկաց մասին եկած դատապարտումը միւս կողմից, շատ շուտով թաւալեցին աւաղի վրա շինած այդ միութեան շէնքը: Այս դէպքն ևս աւելի գրգռեց Կ. Պոլսոյ Պօղոս պատրիարքին որ և յարմար առիթ սկսեց որոնել վերջնական հարուած տալու իրենից կրօնապէս անջատ կաթոլիկ հայերին: Առիթը չուտով երևան եկաւ և Պօղոս պատրիարքը յենկելով մի քանի ազդեցիկ հայ միտքների, մանաւանդ բազմաթիւն Յարութիւն Պէզդեան ամբարայի վրա, (որ այս կողմից շատ տխուր յիշատակութիւն է

թողած թիւրքերոյ հայ-կաթոլիկաց սրտում, դեռ ևս մինչև ցարդ), հանեց այն մեծ հալածանքն, որ մօտ երեք տարի տևեց և այնքան անմեղ հայ ժողովուրդն մահուան և չքաւորութեան ենթարկեց թէ Կ. Պոլսում, որի դէմ էր ուղղուած խաղաղէն հարուածը, և թէ նաև ամբողջ հայաբնակ տաճկական գաւառներում: (1828—30): Ժամանակն և լուսաւորութիւնը հաղիւ են կարողանում մօռացնել տալ Տաճկաստանի հայ-կաթոլիկներին, մանաւանդ գաւառներում, այդ սարսափելի պատահարը: Բայց ինչ հետեանքների հասան Կ. Պոլսոյ պատրիարքներն իրանց այդ աննորոգմիտ ողոց առաջացած բռնական միջոցներով: Եղեւ լուրիւնը դեռ. շատ թարմ է, ուստի առանց մասնաւոր դատողութիւնների, մենք այսքան միայն կասնք, որ եթէ մինչև ցայսօր հայ-կաթոլիկաց անուս դասակարգին մատչելի չէ այնքան հայութեան դադափարը և նա դժուարաւ է կցվում, առհասարակ, ազգային մարմնոյն, դրա պատճառը որքան լուսաւորութեան պակասութիւնն է, այնքան էլ այդ տխուր անցեալի ընդհանուր սրտում թողած խորին տպաւորութիւնները...

Բ.

1829 թվին, երբ յաղթական Ռուսիան և ընկճեալ Թիւրքիան խաղաղութեան դաշն էին կուռ, Հռոմայ պապը, Պիոս IX միջնորդեց կաթոլիկ զաղդիային և Աստուրիային, որ սղա իրենց Պօլսոյ դեպագանց միջոցաւ աշխատեն համոզել Ռուսիային, որ սա իր դաշնադրութեան պայմաններին մինչ էլ որոշէր ի նպատակ աջարեալ հայ-կաթոլիկաց խնդրոյն: Առիթը շատ յարմար էր: Գաղղիա, Անգլիա և Ռուսիա պահանջում էին Յունաստանի կտրիճ գաւառների համար կատաւեալ անկախութիւն: Ռուսի և հայ-կաթոլիկների խնդիրն էլ կարելի էր նոյն բովից անցունել: Եւ յաջողեցաւ խնդիրը: 1830 յունվար 6-ին օսմանեան Սուլթանի ֆէրմանը բոլոր հայ-կաթոլիկ աջարեալներին ևս էր կանչում և վերադարձնում էր գրաւված ստացուածքները: Նոյն այդ ատեն, աջարեան վերջնապապ 6 ամիս յետոյ հաստատուեցաւ Կ. Պոլսում հայ-կաթոլիկաց ան-

միթէ այդ եղանակով բարձրացնել, ոտի կանդ-
նեցնել հայ վարժապետութիւնը, եթէ նա ընկած
է: Կամայականութիւն, խնամութիւն, կողմնապա-
հութիւն,—հաւ չըջապատող հանգամանքները:
Ուրեմն ինչով պէտք է դրամիւն և ոգևորվեն չը
նախապատրաստված ոյժերը:

Անհատականութիւն է, թէ ինչ՝ բարոյականութիւն և
ինչ ինքնաճանաչութիւն պէտք է ունենայ այն
ժողովուրդը, որը այնպէս է վերաբերվում դէպի
այն դասակարգը, որին յանձնում է իր զաւակնե-
րի, իր ամենասիրելի որդոց կրթութիւնը, դաս-
տիարակութիւնը,—ուրեմն նրանց ամբողջ ապա-
գան: Իսկ ամենքն էլ շատ լաւ գիտեն, որ երբ
հայ վարժապետը կամ վարժուէին, կը մաշվի
ֆիզիկապէս, կը կորցնի գործելու կարողութիւնը,
և անցկացրած կը լինի երիտասարդական հաս-
կը,—գուցէ և ծանրաբեռնված ընտանիքով, այն
ժամանակ նա երբեք յոյս չէ կարող ունենալ իւր-
նայո՞ղական արկղինքի, ոչ թո՞ղակի վրա,
և այն ժամանակ նա, հայ վարժապետը, ծերու-
թեան հասակում, պիտի ճաշակի՝ հասարակու-
թեան անտարբերութեան հետ միասին, դառն և
անտանելի աղքատութիւն...:

Խ. Ս.

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱՐՈՒՄ

Վերին-Ազուլիս 25 օգոստոսի

Ամսիս 17-ին մենք—տեղացի թատրոնասիրաց
խումբը—Վերին-Ազուլիսում ներկայացրինք 10-
գուս Վերին-Ազուլիսաց հասարակաց ընթերցարա-
նի «Կոյր» և «Կրթութեան» պիեսները, որից
գոյացած արդիւնքի մասին հարկաւոր ենք համա-
րում հետեւեալ հիշելու ներկայացնել, ի լուր հասա-
րակութեան:

Բայց որ տոմսակներ զննել ընդհանուր գումարը
—110 ր. 50 կոպէկ է: Սրանից ծախվել է ընդա-
մենը 96 րուբլու տոմսով: Այդ 96 րուբլուց պ.
Ս. Սողոմոնեանցին իր մասնակցութեան համար
վարձ տուինք—10 րուբլի. զանազան ծախսեր
(բեմի վարձը, լուսաւորութիւնը, ծառայողներին,
պարիկմաններին և այլն)—27 րուբլ 40 կոպ.
Չորի տոմսակներ մի քանի անձանց, որոնց խում-
բը հարկաւոր է համարել—12 րուբլու 60 կոպէ-
կի, ընդամենը ընդհանուր ծախս է եղած 50 ր.
որ դուրս հանելով 96 րուբլուց՝ զուտ արդիւնք է
վելում 46 րուբլի:

Թատրոնասիրաց խումբը պատշաճ կարգադրու-

կախ նուիրապետութիւն, որով և կատարուեցաւ
լուսաւորչական հայրենից նոցա կերպարայէն անջա-
տումը ի մասին հոգևոր վարչութեան: Այն ժա-
մանակ թէև հայ-կաթօլիկները ցանկանում էին
իրենց կրօնական գլխի վրա միացնել նաև քա-
ղաքական իշխանութիւնը, սակայն զանազան մի-
ջադէպեր արգելք էղան, և հոգևոր ու մարմնա-
ւոր իշխանութիւններն յանձնվեցան երկու տար-
բեր ղեկավարներին: Առաջին հոգևոր կառավա-
րին, որ կրում էր «նախագահ-արքեպիսկոպոսի»
տիտղոսը, եղաւ գեր. Անտոն Դուրիշեանց, իսկ
պատրիարքական իշխանութեան պաշտօնակատար
Յակոբ վարդապետ Չոփուրեան—Մանուէլեանց:
Հայ-կաթօլիկաց այդ ժամանակամիջոցի թիւ մա-
սին որոշակի տեղեկութիւն չը կայ: Բայց կար-
ծում ենք, որ դրանց թիւը 25,000-ից աւելի պի-
տի չը լինէր: Իսկ 16 տարեց յետոյ, երբ համա-
սարկ Հասունեան նախագահական աթոռն
նստաւ, ընդհանուր հայ-կաթօլիկներին հաշվում
էին 35,000: Սա միայն հաստատուպէս կարելի
է ասել, որ ինչպէս պատմութիւնն էլ միշտ ասպա-
ցուցած է, այդ հաւաքածանքը հայ-կաթօլի-
կաց համար ոչ թէ նուաճում է եղաւ,
այլ տարածում: Առանձին նուիրապետութիւն
ունենալուց յետոյ հայ-կաթօլիկներին մէջ առաջին
անգամ խռովութիւն պատահեցաւ եկեղեցական
ծէնքերի և պաշտամանց մասին: Մի քանի մուկե-
ռանդ հռոմէականներն ցանկանում էին ընդունել
բողոքովին լատին արարողութիւնն, սակայն հա-
սարակութեան մեծամասնութիւնը ցանկացաւ
անխախտ պահել ընդհանրապէս Հայաստանեայց
եկեղեցւոյ պաշտամունքը որին և համաձայնեցաւ
Հռոմ: Մի քանի փոփոխութիւններ եղան թէպէտ
տօնական կարգադրութեանց և ծիսական երկրոր-
դական պաշտամանց մէջ—սակայն այսու ամե-
նայնիս հայկական արարողութիւնն ըստ նախա-
հարց տոմարի ընդհանուր գործածութեան ըն-
դունվեցաւ: Այդած փոփոխութեանց մէջ ի հարկէ
նշանաւորն պէտք է համարել Լճմիւրեանի կաթո-
ղիկոսի փոխանակ՝ Հռոմաց. պապի յիշատակու-
թիւնն: Սակայն կողմնակալութեան ենթարկված

թիւնը արդէն արել է այդ 46 րուբլով հասարա-
կաց ընթերցարանի համար հայրեն և ուսանողն
զրեանք բերել տալու:

Խնդրելով յարգոյ խմբագրիդ պատուական «Մը-
շակի» մէջ մեր այս նամակը հրատարակելու, ի
տեղեկութիւն մեր հասարակութեան, անհրաժեշտ
ենք համարում սրա հետ միասին և արտայայտել
մեր անկեղծ շնորհակալութիւնը այն յարգելի ան-
ձանց, որոնք՝ ինչպէս այս, այնպէս և մեր՝ նա-
խորդ ներկայացումներին չեն զլացել իրանց օգ-
նութիւնը—կարասիք, բեմի համար զանազան ի-
րեր տալով—մանաւանդ մեծ. տ. Թագուհի Արաս-
խանեանցին և մեծ. պ. Աւետիս Մնացականեան-
ցին և ընդհակառակը դժուարանում ենք թագ-
ցնել մեր արհամարհանքը դէպի այն պարոնները,
որոնք ամենեկին անընդունակ լինելով հասկանա-
լու մի որ և է բարեգործական նպատակով տըր-
ված թատրոնական ներկայացման նշանակութիւ-
նը՝ թոյլ են տալիս իրանց հրապարակաւ յայտնե-
լու այն միտքը, թէ «անկարելի բան է, որ առանց
նիւթական շահ ունենալու թատրոնասիրաց խում-
բը բարեգործական նպատակով ներկայացումն
տար»: Բարեգաղաքար այսպիսիներէ թիւը Ա-
զուլիսում չառ քիչ է:

Վերին-Ազուլիսի թատրոնասիրաց խումբը՝ տիկ.
Հ. Տէր-Մկրտչեանց, տիկ. Վ. Ռաֆայելեանց, օր.
Ե. Ղարեբեանց, պ. Հայկ Գիւլմանեանց, պ. Ստե-
փանոս Գասպարեանց, պ. Սարգիս Աղամիրզեանց,
պ. Ստեփան Տէր-Մկրտչեանց, պ. Հ. Աբրամեանց,
պ. Յակոբ Բալանթէրեանց, պ. Լ. Թադէոսեանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Кавказ» լրագրում տպված է Բարձրագոյն
հրովարտակ, որ ուղղված է Վրաստանի եկզարիս
Պաւելին: Հրովարտակի մէջ նորին արագնու-
թեանը յայտնվում է Բարձրագոյն շնորհակալու-
թիւն նրա գործունէութեան համար և շնորհվում
է աղամանդեայ խաչ, վեղարի վրա կրելու հա-
մար:

Օգոստոսի 28-ին թիֆլիս եկաւ պետական
խորհրդի անդամ և ուսուց ա. սինօդի օրեր-պրօ-
կուրօր Կ. Պ. Պրեզիտենցի:

Օգոստոսի 31-ին, թիֆլիսի առաջնորդ ա. Ա-
րիտակէս եպիսկոպոսը ժամի 12-ին այցելութիւն
գնաց ա. սինօդի օրեր-պրօկուրօր Կ. Պ. Պրեզի-
տենցիին: Նորին բարձր գերազանցութիւնը նոյն

չը համարվելու համար, այս էլ հարկաւոր ենք
համարում յիշել այստեղ, որ նոյն ժամանակի
հայ-կաթօլիկաց հոգևոր վարչիւնը, որոնք մի
առանձին համալս. չունեն պատմութեան մէջ,
գուցէ չափազանց եռանդից մղված համարձակե-
ցան փոփոխութիւններ մուծանել այնպիսի գըր-
վածներում, որոնցից պէտք է բողոքովին դուրս
լինէին, օրինակ՝ Ներսէս Ենոքեան և այլ նոյն
իսկ Հռոմից իբրև ուղղափառ համարված ու
Հայր Զորվածներում յաւելումներ և կրճատումնե-
րն, թէպէտ դրա աստուածաբանական կէտեր
են, որոնց մասին դեռ ևս մինչև ցարդ վիճում
են և վիսնդներն, ի հարկէ այդ փոփոխութիւնն
կատարողները շատ հմուտ են իրան: Բայց մենք
դառնանք մեր պատմութեան:

Նորիջանեան արքեպիսկոպոսին յաջորդեց Գ.
Պողոս Մարտչեան 1838-ին, որ 4 տարուց յե-
տոյ իրեն օգնական ընտրեց գեր. Հասունեանին:
Նորիջանեանի և Մարտչեանի մասին մի ա-
ռանձին յիշատակութեան արժանի ոչինչ չը կայ
ասելու: Առաւ նիւթը սկսվում է այն ժամանա-
կից երբ 1846-ի յունիս 22-ին նախկին օգնա-
կան եպիսկոպոսն եղաւ նախագահ-արքեպիսկո-
պոս և պատրիարք Կ. Պօլոս, և ըստ Գրքի-Ա-
սիոյ: Իբրև միջադէպ պատմինք այստեղ և մի
ուրիշ անցք, որ նոյն ժամանակի տիրած ողբի-
չառ լաւ է արտայայտում:

Կարելիք ալ Ֆէրիէի, Հռոմի Պրօպագանդայի
Ժողովից ուղարկվում է Կ. Պօլոս, հայոց և յու-
նաց եկեղեցիներն Հռոմաց եկեղեցւոյ հետ միաց-
նելուն աշխատելու համար: Այս նպատակը ներ-
կայացվում է հայոց պատրիարքին և սա յանձն
է առնում վիճաբանութեան մտնել կարդնալ Ֆէր-
իէիին հետ: Բայց որովհետեւ ինքն անձամբ ան-
կարող էր այս բանին, ուստի իր կողմից և իբրև
փոխանորդ հայոց եկեղեցւոյ ուղարկվում է կար-
դինալ մօտ նշանաւոր լեզուագէտ և աստուա-
ծաբան Տէրոյնց պատուելին (Չառուճեանց,
Պրոտաքի): Մի հայ ժամանակակից պատմագիր
պահած է մեղ այդ վիճաբանութեան մանրամաս-
նութիւնը: Բայց ինչ է դուրս գալիս այդ երկու

օրը ժամը երեքին փոխադարձաբար այցելեց նո-
րին արագնուութեանը իր տեսակցութեան վեր-
ջումը Պրեզիտենցիին ցանկութիւն յայտնեց տես-
նել վանքի մայր-եկեղեցին: Արիտակէս արագնա-
նը առաջնորդեց նորին գերազանցութեան վանքի
մայր եկեղեցին, որտեղ նա հետաքրքրվեցաւ մայր-
եկեղեցւոյ հնութիւններով:

Մեզ պատմում են հետեւեալը՝ Յուլիսի 1-ին,
կիրակի օր, Մեսրոբ Արղուլթեանց ազգանունով
մի երիտասարդ, որ երկար ժամանակ հիւանու-
թեամբ էր պարտավոր թիֆլիսում, իսկ այնուհե-
տե Զորս տարի է, որ թողնելով հիւանութեան
արհեստը, սկսեց պարապել լուսակարութեամբ,
անյայտանում է թիֆլիսից: Գրա երեք եղբայրնե-
րը եօթ օր անյայտացածին անդադար որոնելուց
յետոյ, վերջապէս, ութերորդ օրը գտնում են տան
մէջ մի նամակ, որի մէջ կորած եղբայրը գրում է
որ իդուր չը որոնեն իրան, և որ մի ամսից յետ
իր տեղը յայտնի կը լինի: Յուլիսի 26-ին մի գեր-
մանացի ճանապարհորդ գտնում է թիֆլիսից ոչ
հեռու գտնվող գերմանական Բա տե վան կօլո-
նիայի մօտ գտնվող մի աւերակ, սուրբ Գէորգ
կոչված հին եկեղեցի հետախուզելու, և նրա աչքե-
րին ներկայանում է հետեւեալ տեսարանը. մի նո-
րափոր և դեռ չը ծածկված գերեզմանի մէջ պառ-
կած է մի մարդու դիակ վերարկուի տակ, դիակի
մի կողմում դրված են մի քանի աղօթագրքեր,
միւս կողմում չորս հատ վարդ, իսկ ղէլին կողմը
ծխած խոնոյ: Գերեզմանի կողքին դրված է մի
մեծ գերեզմանաքար, որի վրա նկարված է մե-
ռածի պատկերը և փորագրված են հետեւեալ խօս-
քերը. «Ես այստեղ եկայ իբրև մարդ 1886 թիւ
յուլիսի 6-ին և հանգեայ ի Տէր յուլիսի 24-ին»:
Յայտնվում է, որ դա նոյն անյայտացած Մեսրոբ
Արղուլթեանցն է, որ համեմելով Բատեվանի մօտ
գտնվող աւերակ վանքը, ինքն իր ձեռքով փորել
է գերեզմանը, քար է բերել, վրան իր սեփական
պատկերն է նկարել ու վերադիպալ խօսքերը փո-
րագրել: Անմիջապէս գալիս է Բատեվան գերմա-
նական դիւղի վարչութիւնը այդ տարօրինակ անձ-
նապանութեան մասին քննութիւն անելու նպա-
տակով: Քննութիւնից, ինչպէս մեզ պատմում են,
յայտնվում է, որ երիտասարդը իրան մեռցնելու
համար ոչ մի սուր միջոցի չէ դիմած, այլ երկի
իր կեանքին վերջ է տուել քաղցածութեամբ:

«Кавказ» պաշտօնական լրագրում տպված է

կերամբ գիտնական, աստուածաբան մարդոց
վիճաբանութիւնները,—այն ինչ որ պատահել է
և պատահում է միշտ, այսինքն ոչինչ: Կարդնա-
լը գնաց ետ, Տէրոյնցն էլ, որ մի քանի նոր գրքե-
րի, նոր պաշարների անուններ էր լսել, փակվեցաւ
իր սենեակում հռոմէական անհատներ Ստուռածա-
բանութեանց մէջ խրվելու համար, որը մի օր պի-
տի ծառայէր իրեն—մի ազգային հռոմէական
վարդապետի հրատարակութեան դէմ Հայաստա-
նեայց եկեղեցւոյ և Հռոմաց եկեղեցւոյ մէջ «Ե-
րաւախ ոհ» լինելու համար...:

Ինչպէս վերև յիշեցինք 1846-ի յունիսի 22-ին
իշխանութեան գլուխ անցաւ մեր ներկայ յօդուա-
ծի հերոսը, Անտոն պ. Հասունեան, Անարքաբա-
յի եպիսկոպոսը: Հասունեան, որ հալածանաց
դարու զաւակ էր, իր պատրիարքութեան առա-
ջին տարիներումն յայտնի սկսեց խորշում ցոյց
տալ լուսաւորչական հայրենից: Նա ամեն միջոց-
ներ ձեռք առաւ որ իր հօտի անդամներին հե-
ռու պահէ իրենց լուսաւորչական եղբայր հետ
հաղորդակցութիւնից: Մի քանի Միլիթարեանց
աշակերտներ և լուսաւորչական հայ երիտասարդ-
ներ, որոնց յետոյ միացան և ուրիշներ, «Հա-
մադեանց ընկերութիւն» էին հաստատած, նոր
դադարիներին աղեցնութեան տակ, նոյն ժամա-
նակ երկու հասարակութեան մէջ տիրած խոր-
շումը բաւարարու և միանգամայն ազգային գրա-
կանութեան յառաջադիմութեան և կրթութեան
զարգացման աշխատելու համար: Ընկերութեան
նպատակը շատ գովելի էր և յոյս էր տալիս յա-
ռաջանալուն, երբ մի հզօր բազուկ վերնիվայր
տապալեց նորաբողոք հիմնարկութիւնը: Խիստ
հռոմէական Հասունեանը՝ այդ ընկերութեան
անդամ հայ-կաթօլիկ երիտասարդաց հոգւոյ
փրկութեան ամենաակաւոր և որ դործն ի
նկատի ունենալով, անհրաժեշտ հաստատեց հեռա-
ցնել նրանց՝ այդ անխտիր ընտանութիւնից լու-
սաւորչականաց հետ: Այդ նպատակին հասնելու
համար հարկ էր. Համադեանց ընկերութիւնը կոր-
ծանել: Ուստի նա աշխատեցաւ զանազան միջոց-
ներով Բ. Գրան առջև կառնածելի ցոյց տալ ըն-

հետեւալ կառավարչական կարգադրութիւնը:
«Բարձրագոյն հրամանով ներքին գործերի մինիս-
տրութեան, 19 օգոստոսի, 1886 թիւ, հրաժարե-
ցրած է իր պաշտօնից Գուրջայիսի նահանգական
ազնականութեան առաջնորդ Գմիստի Կիպիանի»:

«Правит. Вѣстн.» լրագրում հրատարակված է
շնորհված է ս. Վլադիմիրի երկրորդ աստիճանի
չքանչան Թագածառնից Նիկոլայի լիցենզի տե-
սուչ Կատկովին, ի վարձատրութիւն նրա ու-
սումնական ասպարիզում ունեցած արդիւնաւոր
գործունէութեան և մշակական անընդհատ ձգտում
ներին, որով նա երկար տարիներին ընթացքում
անխնշ կերպով ձգտում էր իրանից կախված բո-
լոր միջոցներով ամրացնելու մտքերի մէջ ուսուց
պետական կեանքի ճշմարիտ սկզբունքների հա-
կացողութիւնը: Նոյն չքանչան շնորհված է
Կովկասեան Գլխաւոր Կառավարչապետի մօտ
առանձնակի յանձնարարութիւնների աստիճա.
նաւոր Սարաջև Լիւին: Սպիտակ Աթոռի չը-
քանչան գլխաւոր կառավարչապետի խորհրդի
անդամներ Պրիբիլին և Պեչէրեւոօվին: Ս.
Աննայի առաջին աստիճանի չքանչանը Մօսկվա-
յի տպարանների գլխաւոր տեսուչ Մսերեան.
ցին, գ. կառավարչի մօտ առանձին յանձնարա-
րութիւնների պաշտօնեայ Պօլիակովին և Կով-
կասի բժշկական մասի վարչութեան անդամ Գո-
րոշևիչին: Ս. Ստանիսլավի առաջին աստի-
ճանի չքանչան Ստաւրոպօլի նահանգապետ Զի-
սերմանին, Կովկասի Ստաւրոպօլիական մաս-
նաժողովի նախագահ Զէյդլիցին և Կովկա-
սեան կառավարչապետի դիւանատան գործավար
Ամբարումովին:

Մեզ հաղորդում են, որ թիֆլիսի ս. Գէորգ ե-
կեղեցւոյ ուսումնարանի հոգաբարձուները՝ արդէն
ընտրված են Պ. Սողոմոն Եղիազարեան հոգա-
բարձու է ընտրված այդ ուսումնարանի համար:
Պ. Եղիազարեանի նախաձեռնութեամբ հոգաբար-
ձութիւնը յայտնել է իրան դիմող բազմաթիւ ու-
սուցիչներին, որ այդ դպրոցում ուսուցչութիւն
անել ցանկացողները պէտք է նախօրը փորձ-
նակ կան դասեր տան հոգաբարձութեան ներ-
կալութեամբ, և դրանից յետոյ միայն հոգաբար-
ձութիւնը ընտրութիւններ կանի: Այժմ իմանում
ենք որ հոգաբարձութիւնը այդ վճիռը փոխել է
և պ. Եղիազարեանի առաջարկութիւնը այլ ևս չէ
ընդունվել:

կերութիւնը և յաջողեցաւ վերջապէս իսպառ-
ցրվել խեղճ երիտասարդաց ակումբը, որոնք ա-
ռաջին փորձն էին կատարել առանց խորու-
թեան կրօնի համադրային գործին միութեամբ
աշխատելու: Հասունեանի այս և նրա նման մի
քանի գործեր ինչքան Հռոմի և կաթօլիկ կրօնա-
մոլների առաջ բարձրացնում էին նրան, այնքան
էլ ստորացնում էին նրան աղատամիտ կաթօլի-
կաց և լուսաւորչական հայոց առաջ: Այդ ժամա-
նակից սկսած Հասունեանի դէմ հակաուսու-
թիւն և նախանձն սկսաւ ցանկել հայ-կաթօլի-
կաց մի մասի սրտերում, որ շատ շուտով բու-
սան և 25 տարի շարունակ աճելով վերջապէս
մի մեծ յեղափոխութեամբ պոռտկեցան, որի հե-
տեանքն եղաւ Հասունեանի աքսորն և Հակահա-
սունեան հերձուածն: Բայց Հասունեան թոյլ
է անհաստատ մարդ չէր. նա չէր կարող իր մի ան-
գամ հետեւած ընթացքից ընկիլիլ: Հասունեան
ասիական խորամանկութեան հետ միացուցած է
իր մէջ եւրօպական քաղաքագիտական հանձար
և անզուսպ փառասիրութիւնը: Նա վայելում է
Պիոս Թ.-ի առանձին սերն ու յարգանքը այդ առթի-
ւ և ներկայացված էր նա բոլոր եւրօպական արքե-
նեայց և դեսպանատանց, որոնց հետ խորին քա-
ղաքավարի կերպով էր վարվում և շատ անգամ
նոցա միջնորդութեամբ հասնում էր այնպիսի
նպատակներին, որոնց մասին ժամանակակից միւս
պատրիարքները և ոչ երևակայել կարող էին: Թի-
ֆլիս աղեցնութիւն և համառ ունէր Հասունեան
նոյն իսկ Եւրօպայում, այդ նրանից կարելի
է հասկանալ, որ երբ գոռող Նապոլեօն III-ի կից
Կայսրուհի Էօժէնին (1869) Կ. Պօլոս եկաւ, նա
իր մասնաւոր յարգանքն դէպի Հասունեան ար-
քան յառաջ տարաւ, որ հայ-կաթօլիկաց պատրի-
արքական մայր եկեղեցւում Հասունեանի առա-
ծունել չղքեցաւ, և խոնարհութեամբ խնդրեց նր-
ա օրհնութիւնը:

Հասունեան լուրջ մասնակցութիւն է ունե-
ցած 1866-ի Զէյթունի հայոց խնդրում:

(Կը շարունակվի)

Նուսանակութեան տօնի պատճառով այստեղ կատարվեց սովորական մեծաշուք հանդէսով մաղթանք, որին ներկայ էին Տուր-Սիվերինից վերադարձած միլիտարները և խնամակալութեան անդամները:

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, 30 օգոստոսի: Գերմանական կայսերական զոյգը և թագաժառանգ իշխանը հասան այստեղ այսօր գերմանական զօրքերի զօրահանգէսի պատճառով: Կայսրանուս զիմառընցին սրանց Սաքսոնիայի թագաւորը, Բադէնի և Սաքսոն-Վայմարի մեծ դուքսը և բազմաթիւ բարձրաստիճան անձեր:

Նիժնի-Նովոգորոժի, 31 օգոստոսի: Տօնավաճառը վերջանում է: հում ապրանքների յաջող վաճառման պատճառով վճարայի ամիսը զործերը արագացան, հացահատիկների գները հաստատ են դառնում: չը վճարողների մասին խօսք չը կայ բոլորովին, բողոքումները անցեալ տարուց աւելի պակաս են: Բաթումի պորտօֆրանկօի հետևանքն այն եղաւ, որ ներկայ տարուց տօնավաճառին կովկասի համար գնվեց մօտ երկու անգամ աւելի ապրանք անցեալ տարվանից: Բադուից, Ասխաբադից և Մերվից հեռագրում են, որ օգոստոսին ռուսաց մանուֆակտուրայի ապրանքը լաւ է ծախվում:

Վիեննա, 31 օգոստոսի: Ռուսաց դեսպանը վերադարձաւ արձակուրդից: Սերբիայի թագաւորը հասաւ երէկ այստեղ ճաշից յետոյ ժամը 3-ին, երկար խօսակցեց արտաքին գործերի միլիտարութեան բաժանմունքի գլխավորին հետ և զիշերը ուղեւորվեց Ստրիսի, Գլաշերբերգի հանքային ջրերի վրայ:

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, 31 օգոստոսի: Գերմանական կայսերական զոյգը, որ գտնվում է ալգասեան կողմերում տեղի ունեցող զօրահանգէսների պատճառով, քնակիչներից ընդունվեցաւ մեծ համակրութեամբ:

Բեռլին, 31 օգոստոսի: «Norddeutsche Allgemeine Zeitung» լրագիրը ասում է, որ այն փորձը, որով փորձում են ներկայացնել իշխան Ալեքսանդրին որպէս գերմանական իշխան, հերքվում է իր սեփական խօսքերով: «Եթէ ես ստիպված եմ հեռանալ, այնու ամենայնի մնում եմ բոլորացի բոլոր բողոքացիներին հաւասար: և կը վերադառնամ իմ տեղս, երբ այս կը պահանջվի հայրենիքի պաշտպանութեան համար»: Յիշեալ լրագրի կարծիքով այն ենթադրութիւնը իբր թէ իշխան Ալեքսանդրը յայտնի հաւանականութեամբ յոյս ունի երկրորդ ընտրութեան վրա, բոլորովին սխալ է, իշխանը քիչ շատ ունի նորից ձեռք բերել բողոքական դահը նոյն իսկ այն միջոցին, եթէ ազգային մեծ ժողովը ցանկանայ այդ ուրովհետեւ մեծ պետութիւնները, որոնք ստորագրել են բերլինեան դաշնագրութիւնը, հազիւ թէ համաձայնվեն այս հարցի վերաբերութեամբ: Բացի սրանից լրագիրը կասկածում է, որ բողոքական գահակալութեան հարցի առիթով Ռուսաստանի և Անգլիայի մէջ համաձայնութիւն կայանայ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 սեպտեմբերի: Երկրորդ ներքին փոխառութեան կատարված տիրաժողով գլխավոր տարած գումարները ընկել են հետևեալ տոմսակներին:

№ սերիայի	№ տոմսի	Գումարը:	№ սերիայի	№ տոմսի	Գումարը:
2.690	20	200.000	7.850	39	
1.348	18	75.000	18.805	8	
11.016	2	40.000	16.865	29	
3.261	34	25.000	4.026	38	
8.909	43	10.000	9.612	12	
9.390	22	10.000	12.544	33	
9.366	36	10.000	2.706	7	
7.994	24		8.715	2	
6.249	36		8.546	31	
8.222	5		12.775	4	
13.059	4		1.386	30	
10.908	9		11.312	22	
			9.517	31	
			8.534	41	
19.823	6		12.569	33	
13.645	45		6.559	28	
3.460	45		3.364	17	
7.051	37		5.457	30	
18.679	44		2.523	30	
8.926	9		9.378	35	
16.866	13				
2.711	22				

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ				
Օգոստոսի 30-ին				
Ռուսաց 1 բուլլ	Լոնդոնի վրա արժէ	239 3/32	պէնս.	
—	Համբուրգի վրա	197 3/4	պէն.	
—	Փարիզի վրա	245 1/2	սան.	
Ռսկի	արժէ	8	ր.	53
Մաքսային կուպոններ	—	8	>	52
Արծաթ	—	1	>	29
Բորսային դիվիդենդներ	—	4	և	60/0
Պետակ. բանկ. 50/0	տոմս 1-ին շրջանի	100	>	12
—	—	2-րդ	—	100
—	—	3-րդ	—	99
—	—	4-րդ	—	92
—	—	5-րդ	—	99
Արեւելեան 50/0	փոխառութ. 1-ին շրջ.	99	>	75
—	—	2-րդ	—	99
—	—	3-րդ	—	99
Ներքին 50/0	առաջին փոխառութ.	238	>	50
—	երկրորդ	226	—	—
51/20/0	բէնտա	104	>	62
Ռսկեայ բէնտա	—	185	—	—
Նոր կոնսոլիդաց փոխառութիւն.	—	99	>	50
50/0	գրաւական թղթեր կայուած.			
—	փոխ. կրեդ. ընկ.	159	>	12
51/20/0	գրաւական թղթեր խերսոնի կայուած. բանկի.	97	—	—
60/0	գրաւակ. թղթ. խարովի կալ. բան.	101	>	75
—	Պաշտպան.	101	>	75
—	Պետ. օրդ.	101	>	75
—	Կիւիլի.	102	>	50
—	Մոսկվայի.	102	>	50
—	Բեռնարդ. ցալ.	101	—	—
—	Նիժ. Սամար.	101	>	25
—	Վիլնայի.	101	—	—
—	Թիֆլիսի.—27 և 43 տ.	96	>	50
—	Քուրսիսի.—18 և 43 տ.	96	>	50
Վ. օլտիւ-կամսի բանկի ակցիաները	564	—	—	—
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	259	>	25	—
Բիբինսկ-Վ. օլտիւ ընկ.	97	>	25	—
Ս. Պետերբուրգի բաղադրային օրդ.				
—	գաղաներ.	94	>	87
—	Մոսկվայի քաղաք. օրդ. գաղաներ.	95	>	62
—	Օլտիւայի.	94	>	25
—	Նոր երկաթուղային բէնտա	158	—	—
—	Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրդ.	86	>	25
—	Պետական բանկի 6-դ հրատարակ.			
—	կուիթան տոմսերը	99	ր.	62
—	Ս. Պետերբուրգի բորսայի արամագրութիւնը հանդարտ է:			

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՊԵՏԻՄԻՐ ԸՆՏԱՆԻՔ Ընդունում է գիշերօթիկ աշակերտներ, 8—13 տարեկան, ձեռնտու պայմաններով: Ընդունվում են և ոչ-գիշերօթիկներ: Հասցեն խմանալ «Մշակի» խմբագրատանը: 5—6

ՀՕԿՕԼԵԻ
Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.
(II. 4857.) 28—50 (b)



ՀԱՐԿԱՌՈՐ Է
ՄԷԿ ՀԱՇՈՒԱՊԱՆՔ ԱՂԱՍԱՖԱ ԿՕՄՄԻՍԻՕՆԵՐԱԿԱՆ
ՊՐԱՆՆԵՐԻՆԻՔԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԻ ԿԱՆՈՆԱՐԻ
ՀԱՅՈՒԱԳՐԱՆՈՒԹԻՒՆԻ ԵՎ ՆԱԽԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՂԻՄԵԼ ԱՅՈՒ
ՀԱՅԵՐԸ՝ Акстафа, Мегерянцъ.
4—5

Տիկին Նատալիա Մովսիսեան, Գէորգ, Գրիգոր և Բաղրատ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆՅԱՆԵՐ
ցաւօք արտի յայտնելով ազգականներին և բարեկամներին առաջինը որդու, իսկ միւսները եղբոր՝ ԳԱՔՐԻԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆՅԱՆ մահը, խնդրում են շնորհ բերել յուզարկաւորութեանը որ տեղի կունենայ Բեթղէհէմի փողոցից (տուն Գարսոնի) Զգրաշէն եկեղեցին ամիս 2, երեքշաբթի օրը առաւօտեան ժամի 10 1/2-ին:

Մի ուսուցիչ, որ աւարտել է իր ուսման ընթացքը Ներսիսեան դպրանոցում և երկու տարի պարապել է ուսուցչութեամբ, ցանկանում է պաշտօն ունենալ հայոց դպրոցներում: Հասցեն խմանալ «Մշակի» խմբագրատանը:

Կարսի հայոց երկսեռ դպրոցների համար հարկաւոր են երկու ուսուցիչներ, ա) մի ուսուցիչ շաբաթական 23 դաս հայերէնից, 3 դաս հայոց պատմութիւնից և հայոց աշխարհագրութիւնից առաջին և երկրորդ դասատանց համար, ուսման 500 ռուբլի: բ) Մի ուսուցիչ 23 դաս թուաբանութիւնից, 2 բնական պատմութիւնից և 3 զօնագրութիւնից առաջին և երկրորդ դասատանց համար, ուսման 500 ռուբլի: Գիմել «Մշակի»-ի խմբագրութեան:

ՇԱՄԲՈՐԵՑՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ Նորաշէն շինութեան մէջ, Տափի Թաղի եկեղեցին ԲԱՅ Է ԱՆՈՒՄ ԻՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ: Ընդունելութիւնները սկսվում են, երեքշաբթի, սեպտեմբերի 2-ից:

ԱՌԱՅՅԱՅԱՅ Հայոց հոգևոր երկսեռ դպրոցների հոգաբարձութիւնը այսու յայտարարում է ի գիտութիւն ուսուցչութիւն անել ցանկացողներին, որ Ախալցխայի հոգևոր երկսեռ դպրոցների համար հարկաւոր են հայոց լեզուի, ռուսաց լեզուի, թուաբանութեան, հայոց պատմութեան և աշխարհագրութեան, ռուսաց պատմութեան և աշխարհագրութեան, բնագիտութեան, հայկական ձայնագրութեան և դժագրութեան ուսուցիչներ: Իւրաքանչիւր ուսուցիչ շաբաթական 24 դասից աւելի չի նշանակուի: Դասադիրն քսանական ռուբլով, որի մէջ բացառութիւն կը լինի ռուսաց լեզուի լաւ ուսուցիչին: Ուստի ցանկացողները թող որքան կարելի է ամենակարճ միջոցում ղիմեն հոգաբարձութեան, ներկայացնելով իրանց ատեստատի հարազատ պատճէնները:

ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻ երկսեռ դպրոցների համար ՀԱՐԿԱՌՈՐ Է ՆԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ ռուսաց լեզուի համար լաւ ուսուցչներով: Պայմանների մասին ղիմել Կենտրոնական գրադաճառանոցը:

Մի օրիորդ, որ աւարտել է իր ուսման ընթացքը Թիֆլիսի օրիորդական գիմնազիոնում, ցանկանում է ուսուցչուհու պաշտօն վարել հայոց դպրոցներում: Կարող է դասախօսել ռուսաց լեզուից, թուաբանութիւնից, աշխարհագրութիւնից և այլն: Հասցեն խմանալ «Մշակի» խմբագրատանը:

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵԻ ԵՒ ԸՆԿ.
(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱՐՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Զորքշաբթի, սեպտեմբերի 10-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MINGRELIE) շոգնաւոր, նաւապետ ԺԻԲՈԻՆ (JIBOIN) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարաշէ: Տեղեկութիւնների մասին պէտք է ղիմել ընկերութեան գործակալներին, Բաթումում պ. Գարանիսին և Թիֆլիսում պ. Բէնիտին, նախկին Արծրունու գալլերէում, № 103.

ԶԱՌՈՒՄԵՆԻ ԵՒ ԹԻԳԻԵԼԻ ՄԱՆԱՌՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ, ընթացական ուսումնարանների և գիմնազիոնների չորս դասարանի ընթացքով: Միխայիլովսկայա փողոց, ընթացական ուսումնարանի հանդէպ: Աշակերտների ընդունելութիւնները սկսված են: Պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 1-ից:

ՎԻԵՆՆԱ Ս. Զ. Դ. ԳՐԵՐԷ ՈՉԵՉՈՎ ԱՒՍՏՐԻԱ

Կարելի է առնել սեղանի գեղեցիկ ԱՆՕԹՆԵՐ, 42 կտոր, միայն 18 Ֆրանկ 75 սանտաւաւորի դադարման պատճառով, ծախու հանված են ՀԱՄԵՆԵԱՆ արծաթէ պատրաստված անօթներու ահագին քանակութիւններ, սովորական գնէն 25 առ 100 գեղձով: Արտագրութիւն են Հալֆէնեան արծաթեղէններ պատրաստող Միացեալ Ընկերութեանց, որը սնանկացած են այժմ:

Միայն 18 Ֆրանկով և 75 սանտիմով ստանալի, ինչ որ յառաջագոյն 60 Ֆրանկով կը ստացվէր: Կը ղրկենք Հալֆէնեան արծաթէ պատրաստեալ սեղանի հետեւեալ անօթերն, որը արտաքայ կարգի ընտրի և ղիմացկուն են:

6	Հատ սեղանի գեղեցիկ դանակներ	Հալֆէնեան արծաթէ
6	պատառաքաններ	"
6	ապուրի մեծ գդալներ	"
6	սուրճի սիրուն գդալներ	"
1	ապուրի խոշոր և ծանր գդալ	"
1	կաթի մեծ գդալ, շատ նուրբ	"
3	հաւկիթի գեղեցիկ և թանձր անօթներ	"
2	սկաւառակներ թէյամանի համար	"
1	թէյի գեղեցիկ թորիչ	"
1	գեղեցիկ պղպեղաման, կամ շաքարաման	"
3	շաքարի շքեղ թասեր	"
6	գեղեցիկ դանակակալներ	Բիւրեղէ

Սպիտակութիւն երաշխաւորեալ 10 տարի: Ընդունելու համար այս 42 անօթներն Ֆրանկ 10 և ուղղակի ընակարանը, 4 կամ 5 օրվայ մէջ, հարկ է ուղարկել 18 Ֆրանկ 75 սանտիմ ընդհանուր միջկրանոցը Հալֆէնեան արծաթեղէններու Միացեալ գործարանաց, այս հասցեով

M. RUNDBAKIN 2 B. Hedwiggasse VIENNE (Autriche)
ՄԱՆՕՐՈՒԹԻՒՆ. Դրամը կը հատուցվի, երբ վաճառքներն չը յարմարին: Հայերէ եղուաւ նամակներ կընդունվեն: 18—18 (b)